ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/45

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.05.2018թ. թիվ 03/26-3/7962-18 գրությամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00166341) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 18.04.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-2723 գրության հիման վրա, 03.05.2018թ. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 18.04.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-2723 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.04.2018թ. 03/27-1/6917-18 գրությունը՝ Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացուցիչ Զառա Աբգարյանը:

3. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն 07.05.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով մրցույթում «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սակայն պատվիրատուի կողմից հարկային մարմնին ուղարկված հարցումը պարտք-պահանջի վերաբերյալ ցույց էր տվել, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ունի ժամկետանց պարտքեր, որոնք գերազանցում էին ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը և ավել էին 50.000 ՀՀ դրամից: Սակայն հարկային մարմնի կողմից 05.04.2018թ. վերցվել է տեղեկանք, որը ապացույց է հանդիսանում, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն 20.03.2018թ. ժամկետանց պարտավորություններ չունի: Սակայն նույն ամսաթվով 05.04.2018թ.

հարկային մարմնին «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Վահե Դաքեսյանի կողմից ներկայացվել է երկու դիմում զրոյական տեղեկանքի համար՝ մեկ օրինակը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի համար՝ 20.03.2018թ. դրությամբ, իսկ մյուսը՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի համար՝ 13.03.2018թ. դրությամբ: Տեղի է ունեցել շփոթմունք և «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի համար 20.03.2018թ. դրությամբ զրոյական պարտք պահանջի տեղեկանքը տրվել է 13.03.2018թ. դրությամբ, իսկ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի համար 13.03.2018թ. դրությամբ զրոյական պարտք պահանջի տեղեկանքը տրվել է 20.03.2018թ. դրությամբ:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Վահե Դաքեսյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/45 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ. քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2018թ. թիվ 03/26-3/7962-18 գրությունը, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 18.04.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-2723 գրությունը և կից փաստաթղթերը, ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 23.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 03.04.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 07.05.2018թ. ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 05.04.2018թ. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին առ 13.03.2018թ. և 20.03.2018թ. դրությամբ տրված տեղեկանքները, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 29.03.2018թ. տրված եզրակացությունը.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով

կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 23.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 5-րդ կետով արձանագրել է, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և ներկայացված հայտը գնահատել է բավարար:

- 8-րդ կետով որոշել է ընթացակարգի 1-ին, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրությամբ, արձանագրվել է, որ Հանձնաժողովի քարտուղարը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով՝ նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը պետք է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնի համապատասխան հարցում:

Հանձնաժողովը 03.04.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստին թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, որոշել է «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 1-ին, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ չափաբաժինների մասով մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից հայտարարված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ 05.04.2018թ. ամսաթվով հարկային մարմնին Ընկերության կողմից ներկայացվել է երկու դիմում զրոյական տեղեկանքներ տրամադրելու համար, որպեսզի 20.03.2018թ. դրությամբ տրված տեղեկանքը ներկայացվի «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին, իսկ 13.03.2018թ. դրությամբ տրված տեղեկանքը՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ին: Սակայն, տեղի է ունեցել շփոթմունք և «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի համար նախատեսված տեղեկանքը տրվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ-ին, իսկ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի տեղեկանքը՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին:

Միաժամանակ, Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 05.04.2018թ. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին առ 13.03.2018թ. և 20.03.2018թ. դրությամբ տրված տեղեկանքները:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 20.03.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.05.2018թ. գրությամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00166341) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**